

ՀՏԴ 796

DOI: 10.53068/25792997-2024.3.13-90

**ԱԹԼԵՏԻԿԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Հ. Վ. Քոսակյան<sup>1</sup>, Վ. Ա. Սմբարյան<sup>2</sup>

<sup>1</sup>Երևանի պետական բժշկական համալսարանի «Հերացի» ավագ դպրոց, Երևան, Հայաստան,

<sup>2</sup>Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

**Առանցքային բառեր:** Աթլետիկա, առողջության ամրապնդում, դաստիարակություն, ֆիզիկական զարգացվածություն:

**Հետազոտության արդիականություն:** Այսօր, առավել քան երբևէ, անհրաժեշտ է մտահոգվել աճող սերնդի առողջության, դաստիարակության և ազգաբնակչության ֆիզիկական պատրաստության մակարդակի բարելավման և ամրապնդման հիմնահարցերով: Ժամանակակից տեխնոլոգիաներով պայմանավորված՝ ներկայումս բավականին նվազել է մարդկանց կենսագործունեությունը, ինչն անբարենպաստ է ազդում առողջության վրա [1,3,4]:

Գիտատեխնիկական առաջընթացի բազմաթիվ դրական ազդեցության հետ զուգահեռ տեղի է ունենում երիտասարդների առողջության և ֆիզիկական ընդունակությունների մակարդակի անկում: Այդ ամենը ուղիղ կապ ունի սակավաշարժության և նստակյաց ապրելակերպի, ինչպես նաև ժամանակակից սննդակարգի և սննդամթերքի օգտագործման հետ: Հետևաբար, ֆիզիկական ակտիվությունը,

առավել ևս աթլետիկական վարժություններն առավելագույնն են ազդում մարդու դաստիարակության, առողջության ամրապնդման և ֆիզիկական զարգացման գործընթացի վրա [1,7]:

**Հետազոտության նպատակը:** Կատարված աշխատանքի ընթացքում նպատակ է դրվել ներկայացնել աթլետիկական վարժությունների նշանակությունը մարդու առողջության ամրապնդման, ֆիզիկական դաստիարակության, կրթության և առողջ ապրելակերպ վարելու գործընթացում:

**Հետազոտության խնդիրները:** Ներկայացնել մարզման և ուսուցման գործընթացում աթլետիկական վարժությունների ազդեցությունը մարդու շարժողական ընդունակությունների մշակման, առողջություն ամրապնդման և ֆիզիկական դաստիարակության վրա:

**Հետազոտության մեթոդները:** Հետազոտության նպատակին հասնելու և խնդիրները լուծելու համար օգտագործել ենք հետևյալ մեթոդները՝

1. մասնագիտական գրականության աղբյուրների ուսումնասիրում, վերլուծություն, համադրում, ընդհանրացում,

2. Էմպիրիկ մեթոդներ, դիտարկում, քննարկում, զննում:


**Հետազոտության արդյունքների վերլուծություն:** Աթլետիկական վարժություններն այնքան պարզ են ու բնական, որ մատչելի են յուրաքանչյուր տարիքի և սեռի մարդու համար: Քայլը մարդու տեղաշարժման ամենաբնական եղանակն է, իսկ վազը արագ տեղաշարժվելու բնական վարժություն: Քայլը և վազը իրենց կատարման կենսամեխանիկական տեսակետից ցիկլիկ վարժություններ են, նրանց կիրառումն ինչպես մարդու առողջությունը ամրապնդելու, այնպես էլ բազմաթիվ մարզաձևերում ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստության կարևորագույն միջոց է [2,8,9]:

Աթլետիկական բազմաթիվ վարժություններ և մրցաձևեր (քայլը, վազը, ցատկեր, նետումներ) ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստության հիմնական միջոցներ են: Դրանց օգնությամբ մարզիկների մոտ մշակվում են այնպիսի հիմնական շարժողական ընդունակություններ, ինչպիսիք են՝ ուժը, արագաշարժությունը, դիմացկունությունը, ճկունությունը և ճարպկությունը, ինչպես նաև սրանցից բխող հատուկ մասնագիտական շարժողական ընդունակությունները (նկար 1):


Հատուկ ֆիզիկական պատրաստությունն ուղղված է բոլոր օրգան-համակարգերի, մարզիկի ֆունկցիոնալ հնարավորությունների զարգացմանը՝ կախված տվյալ մարզաձևի յուրահատկությունից:

Ընդհանուր ֆիզիկական պատրաստության զարգացման համար օգտագործում են ընդհանուր ներգործություն ունեցող, իսկ հատուկ ֆիզիկական պատրաստության զարգացման համար նպատակաուղղված աթլետիկական վարժություններ [3,7]:


Հայաստանի Հանրապետությունում աթլետիկական մրցաձևերը և վարժությունները ֆիզիկական դաստիարակության պետական համակարգի կարևորագույն մասն են կազմում: Վաղ տարիքից աթլետիկական վարժությունները լայնորեն կիրառվում են նախադպրոցական հաստատություններում, դպրոցներում, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Աթլետիկական վարժությունները մեծացնում են մարդու օրգանիզմի բոլոր համակարգերի ակտիվությունը, նպաստում են կոփմանը, առավել արդյունավետ ազդեցություն ունեն տարբեր հիվանդությունների կանխարգելման գործում: Մատչելի չափավորված աթլետիկական վարժությունները կարող են օգտագործվել ինչպես բարձրակարգ մարզիկների ֆիզիկական որակների զարգացման, այնպես էլ երիտասարդ սերնդի, վատառողջ մարդկանց, տարեցների, վնասվածքներից հետո վերականգնողական ժամանակահատվածում և, պարզապես մարդու մարմնի բնականոն գործունեության և զարգացման համար [3,8,10]:



Ա. Վազք



Բ. Տեղից հեռացասկ



Գ. Ցատկեր արգելքների վրայից




Դ. Տեղից եռացասկ



Ե. Լցոնաձ գնդակի նետում գլխի վրայից




Զ. Լցոնաձ գնդակի նետում ցածից առաջ



Է. Թենիսի գնդակի նետում



Թ. Վազք ծանրություններով



Ճ. Վազք սարնիվեր

Նկար 1. Ընդհանուր և հատուկ զարգացնող աթլետիկական վարժություններ

Աթլետիկական վարժությունները երիտասարդ սերնդի ֆիզիկական դաստիարակության հիմնական միջոց են: Դպրոցական տարիքում աթլետիկական վարժությունների հիմնական նպատակները հետևյալն են՝

- ուսուցանվողների առողջության ամրապնդում և կոփում,
- ընդհանուր ֆիզիկական պատրաստության բարելավում և բազմակողմանի զարգացում,
- ուժի, արագաշարժության, դիմացկունության, ճարպկության և ճկունության մշակում,
- աթլետիկական վարժությունների տեխնիկայի ուսուցում և կատարելագործում:

Աթլետիկական վարժությունների մատչելիությունը, հարաբերական պարզությունը և նվազագույն ծախսերը հնարավորություն են տալիս դրանք կիրառել գրեթե ամենուր, ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային վայրերում: Սպորտային մարզումները և մրցակցային գործունեությունը աթլետ մարզիկներին հնարավորություն են տալիս գիտակցել իրենց պոտենցիալ կարողությունները, արտահայտվել որպես անհատներ, ձևավորել բնավորություն [8]:

Աթլետիկական վարժությունները կարելի է բնութագրել հետևյալ կերպ՝

- մարզաձև, որտեղ մարզիկները ցուցաբերում են արդյունքներ՝ մարդու հնարավորության սահմաններում,

- մարդու օրգանիզմի վերականգնման միջոց,
- երիտասարդ սերնդին կրթելու և զարգացնելու միջոց,
- ուսումնական առարկա՝ ֆիզիկական դաստիարակության և սպորտի բնագավառում մասնագետներ պատրաստելու միջոց,

Աթլետիկական վարժություններն ունեն՝

- առողջարարական,
- կրթական,
- կիրառական,
- դաստիարակչական նշանակություն:

Աթլետիկան ունի մեծ դաստիարակչական նշանակություն. այն մեծ հնարավորություններ է ընձեռում՝ անձի մոտ սոցիալական հատկությունների զարգացման համար, ներառյալ՝ աշխատասիրություն, ինքնազոհաբերություն, արժանապատվություն, պատիվ, հավատարմություն, հարգանք: Աթլետիկան նպաստում է հաստատակամության, քաջության, վճռականության զարգացմանը: Նրանք ձևավորում են բնավորություն, ամրացնում են կամքը, սովորեցնում են չխուսափել դժվարություններից: Հոգեբանական պատրաստությունը համատեղում է բարոյական և կամային պատրաստությանը [1,5]:

Աթլետի հոգեբանադաստիարակչական պատրաստությունն իրականանում է ցանկացած աթլետիկական վարժություն կատարելու ընթացքում, նպաստում է

ուսուցանվողների մտավոր ունակությունների զարգացմանը, տրամաբանությանը, հնարամտությանը, վերլուծության և շփման զարգացմանը, աշխատասիրությանը և համառությանը: Մարզումները և մրցակցային գործունեությունը աթլետիկական մրցաձևերում հնարավորություն են տալիս մարզիկներին իրագործել իրենց կարողությունները, ներկայանալ որպես անհատականություն, ձևավորել բնավորություն և ստեղծել սեփական օպտիմալ հոգեբանական միջավայր: Աթլետիկայով մարզվելը, թիմային մրցումների մասնակցությունը դաստիարակում է կոլեկտիվում աշխատելու կարողություններ, առաջադրված գործի հանդես պատասխանատվություն [4,7]:

Աթլետիկական հավասարապես զարգացնում է մարդու մկանային տարբեր խմբեր, նպաստում է ճիշտ կեցվածքի ձևավորմանը, կարծրացմանը և շնչառական (ռեսպիրատոր) հիվանդությունների դեմ իմունիտետի ձեռքբերմանը ու բարձրացմանը: Վազքը, ցատկը, նետումները բարենպաստ ազդեցություն են ունենում սրտանոթային համակարգի և շնչառական օրգանների վրա [8,10]: Աթլետիկական մրցաձևերով կանոնավոր, համակարգված վարժությունները նպաստում են ներդաշնակ ֆիզիկական զարգացմանը, խթանում են առողջությունը, ձևավորում մի շարք կենսական շարժիչ հմտություններ, բարձրացնում օրգանիզմի դիմադրողականությունը:

Աթլետիկական տարբեր մրցաձևերով մարզումների գործընթացում շնչառական և սրտանոթային համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունների բարձրացումն այնքան մեծ է, որքան բարձր է վարժությունների ընդհանուր համամասնությունը, որոնք նպաստում են դիմացկունության մշակմանը (վազքեր, մարզական քայք, բազմամարտ): Նյարդային և մկանային համակարգերի և անալիզատորների փոփոխություններն առավել ցայտուն են արտահայտվում արգելավազքով նետումներով և բազմամարտով զբաղվող աթլետ մարզիկների մոտ:

Առողջարարական վազքի ազդեցության ներքո նկատվում է նաև ճարպային նյութափոխանակություն, որն արյան մեջ նվազեցնում է խոլեստերինի և եռազլիցերիդների մակարդակը, ինչը կանխում է ներկայումս լայն տարածված վեգետատիվ-անոթային դիստոնիայի զարգացումը երիտասարդների շրջանում, իսկ ավելի ուշ՝ աթերոսկլերոզը: Նվազում է արյան մածուցիկությունը, ինչը հեշտացնում է սրտի աշխատանքը և նվազեցնում է արյան մակարդան վտանգը [6,8,10]: Վազքը մարմնի քաշը նորմալացնելու արդյունավետ միջոց է: Այն երիտասարդները, որոնք պարբերաբար զբաղվում են առողջարարական վազքով, մարմնի քաշը մոտ է իդեալականին, իսկ յուղայնությունը 1,5 անգամ պակաս է, քան այն դեռահասների մոտ, որոնք չեն զբաղվում

վազքով: Բացի վազքի հիմնական առողջապահական առավելություններից, հարկ է նշել նաև նրա դրական ազդեցությունը ածխաջրերի նյութափոխանակության, լյարդի աշխատանքի և աղեստամոքսային տրակտի և ոսկրային համակարգի վրա: Լյարդի ֆունկցիաների բարելավման հետ կապված՝ լյարդի հյուսվածքի կողմից թթվածնի սպառումը վազքի ընթացքում ավելանում է 2-3 անգամ: Բացի այդ, վազքի ընթացքում, խորը շնչելիս, դիաֆրագմայի միջոցով տեղի է ունենում լյարդի մերսում, որը բարելավում է լեղու արտահոսքը և լեղապարկի խողովակների աշխատանքը՝ նորմալացնելով դրանց լարվածությունը: Աթլետ մարզիկները՝ որպես կանոն, ունեն մարմնի համամասնական կառուցվածք:

Աթլետիկական վարժություններն ունեն մեծ կրթական նշանակություն: Աթլետիկայով զբաղվելու ընթացքում ուսուցանվողը ձեռք է բերում աթլետիկական վարժությունների տեխնիկայի, մարզումների պլանավորման և կազմակերպման, օրգանիզմի կառուցվածքի և ֆունկցիաների, անձնական և հասարակական հիգիենայի կանոնների, կառավարման և ինքնակառավարման, մրցումներին մասնակցելու, սննդակարգի ռեժիմի, օրգանիզմի նկատմամբ բժշկական վերահսկողության հիմունքների մասին գիտելիքների լայն շրջանակ [2,7]: Տարբեր վարժությունների ուսուցումը պահանջում է ոչ միայն ֆիզիկական, այլև մտավոր լարվածություն, ինչն էլ նպաստում է

www.sportedu.am

մտավոր հնարավորությունների զարգացմանը: Ֆիզկուլտուրային գործունեություն իրականացնելիս՝ անձը ճանաչում է ինքն իրեն, շրջապատը, միջավայրը: Նրա մոտակտիվ զարգանում է ինքնուրույնությունը, ստեղծագործական կարողությունները և նախաձեռնությունները, ձևավորվում են բնավորության անհատական գծերը, սեփական աշխարհայացքը և մտածողության ձևերը, սեփական գործողությունների և ուրիշների նկատմամբ քննադատական վերաբերմունք [2,6,8]:

Մարզումների ընթացքում աթլետ մարզիկները սովորում են ղեկավարել սեփական շարժումները, կատարելագործում են իրենց հմտությունները՝ արագ և արդյունավետ վարժություն կամ շարժում կատարելու, արգելքների հաղթահարման, առարկաների հետ գործողությունների կատարման մեջ:

**Եզրակացություն:** Մասնագիտական գրականության աղբյուրների ուսումնասիրությունն ու վերլուծությունը փաստում են այն մասին որ՝

1. Աթլետիկական վարժություններն ունեն մեծ ազդեցություն աճող սերնդի առողջության պահպանման և ամրապնդման գործում, նրանց միջոցով զարգանում է սրտանոթային, շնչառական, նյութափոխության համակարգերը, ամրապնդվում է հենաշարժողական ապարատը, կանխարգելվում են բազմաթիվ հիվանդություններ:

2. Աթլետիկական վարժությունների միջոցով մշակվում են մարդու համար

այնպիսի կարևորագույն շարժողական ընդունակություններ, ինչպիսիք են՝ ուժը, արագաշարժությունը, դիմացկունությունը, ճարպկությունն ու ճկունությունը:

3. Աթլետիկական վարժությունները դաստիարակում են մարդուն բնորոշ բազմաթիվ բարոյական գծեր՝ աշխատասիրություն, ինքնազոհաբերություն, արժանապատվություն, պատիվ, հավատարմություն, հարգանք և այլն:

4. Աթլետիկայով մարզվելու ընթացքում ուսուցանվողը ձեռք է բերում օրգանիզմի կառուցվածքի և ֆունկցիաների, անձնական և հասարակական հիգիենայի կանոնների, կառավարման և ինքնակառավարման, մրցումներին մասնակցելու, սննդակարգի, օրվա ռեժիմի, օրգանիզմի նկատմամբ բժշկական վերահսկողության հիմունքների մասին բազմազան գիտելիքներ:

### 📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ղազարյան Ֆ.Գ., Մարդու շարժողական ընդունակությունների բանաձևը, Մենագրություն, Երևան, 2015, 125 էջ:
2. Борисова Н. Ю., К вопросу о социальной значимости физической культуры / Н. Ю. Борисова // ЭСГИ. 2018. №3 19 с.
3. Врублевский Е.П., Легкая атлетика. Основы знаний в вопросах и ответах. – М.: спорт, 2017. – 298 с.
4. Озолин Н.Г., Педагогические основы методики обучения легкоатлетическим упражнениям/ Н.Г. Озолин, Ю.Г. Травин. – М.: Академия, 2011. – 79 с.
5. Орешкин Ю. А., К здоровью через физкультуру. —2-е изд. перераб. и доп. М.: Медицина, 1990. — 176 с.,
6. Матвеев Л.П., Общая теория спорта и ее прикладные аспекты учебник для вузов физич. культуры. 5-е изд. – М. : Сов. спорт, 2010. – 340 с.
7. Севедин С. В., Физическое воспитание как часть физической культуры / С. В. Севедин, Е. С. Тагаев // Вестник науки и образования. 2019. №13-1 67с.
8. Шोलих М., Круговая тренировка. Общая редакция и предисловие А.П.Матвеева; пер. с немецкого А.М.Мирского -2-ое изд.-М.: Спорт, 2021 -216 с.
9. [https://studopedia.net/19\\_128458\\_mesto-i-znachenie-legkoy-atletiki-vsisteme-fizicheskoy-kulturi.html](https://studopedia.net/19_128458_mesto-i-znachenie-legkoy-atletiki-vsisteme-fizicheskoy-kulturi.html) [մուտք՝ 05.09.2024]
10. <https://www.fizkulturaissport.ru/vidy-sporta/legkaya-atletika/285-mesto-iznachenie-legkoj-atletiki-v-sisteme-fizicheskoy-kultury.html> [մուտք՝ 10.10.2024]

## HEALTH-IMPROVING AND APPLIED SIGNIFICANCE OF ATHLETICS EXERCISES

A.V. Kosakyan<sup>1</sup>, V.A. Smbatyan<sup>2</sup>,

<sup>1</sup>YSMU “Heratsi” High School, Yerevan, Armenia,

<sup>2</sup>Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia

### ABSTRACT

**Keywords:** athletics, health promotion, upbringing, education, physical development, significance.

**Research relevance:** In today's world, improving the health and physical fitness of the younger generation is crucial due to the negative impact of modern technology, which has led to reduced physical activity and poorer health. Despite the positive effects of technological progress, there has been a decline in young people's physical abilities and cognitive functions, linked to sedentary lifestyles and poor dietary habits. Therefore, physical activity, especially athletics, plays a vital role in education, health promotion, and physical development.

**Research aim and objectives:** This research explores the role and significance of athletics in education, health promotion, and fostering a healthy lifestyle.

**Research methods and organization:** To achieve the research goals, the following methods were used:

Study, analysis, comparison, and generalization of relevant literature.

Empirical methods, including observation, discussion, and analysis.

The study was conducted during the 2023-24 academic year in two stages: first, a thorough literature review, followed by data analysis, comparison, and conclusion formulation.

**Research result analysis:** Athletics exercises help develop various motor skills, which are essential for physical education. Key goals for school-aged children include improving health, fitness, strength, speed, endurance, agility, flexibility, and technique.

**Conclusion:** Athletics plays a significant role in maintaining and improving the health of young people, particularly in developing cardiovascular, respiratory, and musculoskeletal systems, and preventing disease. Athletics fosters qualities such as hard work, self-discipline, and respect, while also providing knowledge about body functions, hygiene, leadership, and nutrition.



## ОЗДОРОВИТЕЛЬНО И ПРИКЛАДНОЕ ЗНАЧЕНИЕ ЛЕГКОАТЛЕТИЧЕСКИХ УПРАЖНЕНИЙ

А.В. Косакян<sup>1</sup>, В.А. Смбатян<sup>2</sup>,

<sup>1</sup>Старшая школа ЕГМУ «Гераци», Ереван, Армения,

<sup>2</sup>Государственный институт физической культуры  
и спорта Армении, Ереван, Армения

### АННОТАЦИЯ

**Ключевые слова:** легкая атлетика, укрепление здоровья, воспитание, образование, физическое развитие, значение.

**Актуальность исследования.** Сегодня, как никогда прежде, необходимо заботиться об улучшении и укреплении здоровья подрастающего поколения, вопросов образования, уровня физической подготовленности населения страны.

Наряду с многочисленными положительными эффектами научно-технического прогресса наблюдается ухудшение здоровья когнитивных функций и физических способностей молодежи. Все это напрямую связано с недостаточной активностью и малоподвижным образом жизни, а также с современным режимом и потреблением продуктов питания. Поэтому двигательная активность, особенно легкоатлетические упражнения, оказывают благоприятное влияние на процесс воспитания, образования, укрепления здоровья и физического развития человека.

**Цель исследования.** В исследовании поставлена цель описать роль и значение легкоатлетических упражнений на процесс образования, воспитания, укрепления здоровья человека и ведения здорового образа жизни.

**Методы исследования.** Для достижения поставленных целей исследования использованы следующие методы:

1. изучение, анализ, сравнение и обобщение многочисленных источников специальной литературы,

2. Эмпирические методы, наблюдение, обсуждение анализ и обобщение.

Исследование организовано и проведено в течении 2023-24 учебного года. На первом этапе изучено и проанализировано большое количество литературных источников по проблеме. Н втором этапе собранная информация была обработана, сопоставлена, обобщена и представлены соответствующие выводы.

**Анализ результатов исследования.** С помощью легкоатлетических упражнений, являющихся основным средством физического воспитания молодого поколения, можно развивать различные двигательные способности человека. Основными задачами легкой

атлетики в школьном возрасте являются: закаливание и укрепление здоровья обучающихся, улучшение общей физической подготовленности и разностороннее развитие, воспитание силы, быстроты, выносливости, ловкости и гибкости, тренировка и совершенствование техники спортивных упражнений.

**Краткие выводы.** Легкоатлетические упражнения оказывают большое влияние на сохранение и укрепление здоровья подрастающего поколения, развивают сердечно-сосудистую, дыхательную и пищеварительную системы, укрепляют опорно-двигательный аппарат, предупреждают многие заболевания. С их помощью развиваются основные двигательные способности человека, воспитываются такие качества, как трудолюбие, самопожертвование, достоинство, честь, верность, уважение и т. д.

### ***Տեղեկություններ հեղինակների մասին***

**Հասմիկ Վատուտինի Քոսական՝** Երևանի պետական բժշկական համալսարանի «Հերացի» ավագ դպրոցի ուսուցչուհի, Երևան, Հայաստան, E.mail: [hasareg@yandex.ru](mailto:hasareg@yandex.ru),

**Վարդան Ավետիսի Սմբատյան՝** մ.գ.թ., Յիկլիկ մարզաձևերի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: [vardan.smbatyan@sportedu.am](mailto:vardan.smbatyan@sportedu.am):

### ***Information about the authors***

Hasmik Vatutin Kosakyan, Lecturer at Heratsi High School, Yerevan State Medical University, Yerevan, Armenia, E-mail: [\\_hasareg@yandex.ru](mailto:_hasareg@yandex.ru), Yerevan, Armenia

Vardan Avetis Smbatyan, Ph.D, Associate Professor of the Chair of Cyclic Sports, State Institute of Physical Culture and Sport of Armenia, Yerevan, Armenia, E.mail: [vardan.smbatyan@sportedu.am](mailto:vardan.smbatyan@sportedu.am)

Հոդվածն ընդունվել է 01.08.2024–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 02.08.2024–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան